



87. ՏԵՈՒՐ ԹԱԳԱՎԵՐԸ

Մի թագավեր ա ըլլմ, շատ հարուստ ա ըլլմ, բեխա չի ունե-
նըմ, շատ տխուր ա ըլլմ:

Օրերի մի օրը էս թագավերը գնըմ ա ժողովրդի մեջ ման գալ,
մի փոզոցով անց կենալիս, տենըմ ա՝ մի տանից ծիծաղի ձեն ա
գալի, մոտանըմ ա, տենըմ ա ծափ, խնդում, ուրախութիւն:

Սա համարը գրըմ ա, վեր ունում:

Վեր գալիս ա տուն, վազիրին ասըմ ա.— Գնա էս ինչ համա-
րի տան տուրունջը կանչի:

Վազիրը գալիս ա դրան կանչըմ ա, բերըմ թագավերի կուշտը:

Թագավերը սրան ասըմ ա.— Դուք էգ ընչի՞ վրա եք տհե
ուրախանըմ, վեր ամեն ըուգուն ձեր տան մոտովը անցկենալիս
ուրախութենի, ծափի, ծիծաղի ձեն եմ լսըմ:

էս մարդը ասըմ ա.— Թագավերը ապրած կենա, ես չորս
հատ լավ անգին քար ունեմ, ես ու իմ կնիկը նհանց հետ հաղ ենք
անըմ, ուրախանըմ ենք:

Թագավերը զարմանըմ ա, ասըմ ա.— Ես հարուր եռեսուն
անգին քար ունեմ, ամեն մինը մի դշի ձվի չափ, ուրախանըմ չեմ,
հմի դու էդ չորս հատի մհար ուրախ ե՞ս:

էքսը թագավերը կնգա հետ նստըմ ա ու սկսըմ խաղ անիլը—
կնիկը քցըմ ա, կպնըմ ա սրա աչք ունքն ա կապտցնըմ, սա քցըմ ա՝

Յնգա աչք ունքն ա կպտցնում: Տենում ա բան շի դուրս էկամ, քո-
ղում ա:

էքսը էդ մարդին կանչում ու ասում ա.— Դու խի՞ ինձ խա-
փեցիր:

Ասում ա.— Խի՞ խափեցի:

Ասում ա.— Բա ինչ արիր, ասեցիր. «Ծա ու իմ կնիկը շորս
անդին քարի հետ հաղ ենք անում, ուրախանում»: Ծա էլ իմ կնգւ
հետ հաղ արի, նա իմ աչք ունքը կպտացրավ, ես էլ՝ իրանը:

էս մարդը ծիծաղում ա, ասում ա.— Վա՛յ, թագավերը ասրած
կենա, բա ինձ անգին քարը ո՞վ ա տվել, էդ հու ես իմ շորս բեխին
եմ անգին քար ասում:

Նոր թագավերը կլխի ա ըլում ու ասում ա.— Ախպեր, դուզ ես
ասում, դուզ, վեր նրանք անգին քար են, դու նրանցով միշտ ուրա-
խանում ես, համա ես իմոնցովը չեմ ուրախանում:

